ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

03 սեպտեմբերի 2025թ. **ք. Երևան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 27

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԱԾ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՄԱՆԴԱՏԸ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՋՈՐԴ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ազգային Ժողովի նախագահի 2025 թվականի սեպտեմբերի 1-ի «Ազգային Ժողովի պատգամավոր Արեն Մկրտչյանի՝ պատգամավորի լիազորությունները դադարած համարելու մասին» N 31 արձանագրությունը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 100-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Մ Է.

Ազգային Ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած պատգամավորի մանդատը տրվում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի առաջին մասի հերթական հաջորդ թեկնածու Վանիկ Սիրակի Օհանյանին:

Հանձնաժողովի նախագահ՝	**Վ. Հովակիմյան**
Նախագահի տեղակալ՝	**Ն. Հովհաննիսյան**
Հանձնաժողովի քարտուղար՝	**Ա. Սմբատյան**
Անդամներ՝	**Ա. Գրիգորյան**
	Ժ. Կարապետյան
	Ս. Մարկոսյան
	Ա. Տերչանյան